ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE

**HEAD OF STAFF**

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 02 42, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: headofstaff@edu.am, www.edu.am

N 04/06.2/541-14 "22" 01 2014թ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
ՀԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանին
/ք.Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Հարգելի Գևորգ Հայրապետյան

Ի պատասխան 21.01.2014թ. ՀՀ կրթության և գիտության նախարարություն հասցեագրած Ձեր հ.211-ի 9 գրության՝ զեղչերի մասին տեղեկատվություն տրամադրելու մասին, տեղեկացնում եմ, որ համաձայն ՀՀ Կառավարության 2006թ. հուլիսի 27-ի հ.1183-Ն որոշմամբ հաստատված՝ <<ՀՀ բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգ>>-ի 5-րդ կետի՝վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցում է՝

ա) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին..

դ) վճարովի ուսուցման համակարգում 2 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին..

ը) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ բուհի հայեցողությամբ>>:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ համաձայն նույն կարգի 6-րդ կետի՝ ուսման վճարը մասնակի փոխհատուցող ուսանողական նպաստների չափը սահմանում է և այն տրամադրելու գործառույթներն իրականացնում է բուհը:

Ուստի հիմք ընդունելով վերոգրյալը՝ Մարիանա Ստեփանյանը կարող է սահմանված կարգով դիմել բուհի ղեկավարությանը՝ ներկայացնելով վերոհիշյալ կետերին համապատասխանող փաստաթղթեր:

Հարգանքով՝

Միեր Ղազարյան

Կատ. Ա.Վահրամյան
հեռ. 58-95-26